


32

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



ՄՈՒԷԷՆ ՍՊԱՐԱՊԵՏ ՀԱՅՈՅ

Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և  
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը  
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին  
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**32**

Yerevan – 2021

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**32**

Ереван – 2021

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**32**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուխաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 32, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. Երևան, 2021: 440 էջ:*

*Հ 31/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2021:*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունն ու բանասիրությունը, եկեղեցու պատմությունն ու երաժշտությունն առնչվող հոդվածներ, Հակոբ Փափազյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովի (1-3 հուլիսի, 2021 թ.) նյութեր և հրապարակումներ:*

## ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

### «ԱՉՂԱՐԱՐ»-ՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՏԱՌ-ՊԱՐՍԿԵՐԵՆ ՄԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ\*

**Բանալի բառեր՝** Հայատառ, արաբատառ, պարսկերեն, հանդես, փաստաթուղթ, տպագրություն, կրոնական, գեղարվեստական, կաթողիկ:

«Ազդարար» հանդեսի<sup>1</sup> 1795 թվականի Շբաթ ամսվա<sup>2</sup> համարում (էջ 253-254) հրատարակվել է Հնդկաստանի Արկոտի իշխան Մուհամմադ Ալի իսան Վալլաջահիի պարսկերեն մի փաստաթղթիի հայատառ տարբերակը<sup>3</sup>: Այն վերնագրված է «Պատնէն թղթոյն վարաջա Մահմատալիխանին եղաւ աստ ի հայ գրով, յուսամ ը[ն]թեցողաց հանոյ լինի ըստ կամաց իւրեանց»: Փաստաթուղթն Արկոտի իշխանի համաձայնությունն է արաբատառ տպարան հիմնելու վերաբերյալ, որի նախաձեռնությունն իր վրա էր վերցրել Շմավոնի որդի Հարությունը՝ Շիրազի բարձրագույն դպրանոցից, նույն ինքը՝ 18-րդ դարում Մադ-

\* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի Ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B125 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում

<sup>1</sup> «Ազդարար» ամսագիրը լույս է տեսել Հնդկաստանի Մադրաս ֆաղաֆում՝ 1794-1796 թվականներին: Խմբագիրը՝ Հարություն ֆահանա Շմավոնյանը, 1784 թ. ժամանում է Մադրաս և ստանձնում Մուրթ Աստվածածին եկեղեցու ավագ ֆահանայի պաշտոնը: 1789 թ. Շմավոնյանը սկսում է զբաղվել տպագրական գործունեությամբ, իսկ 1794 թ. տպագրում է հայ առաջին հանդեսը՝ «Ազդարարը», տե՛ս **Մարգո Մխիթարյան**, *Հայերեն առաջին պարբերականը և նրա խմբագիրը*, Երևան, 2016, էջ 21:

<sup>2</sup> Ըստ Ազարիա Ջուղայեցու (16-րդ դար) հայտնի «Ազարիայի կամ Ջուղայեցիների տոմար» անունով օրացույցի տարվա երրորդ ամիսը:

<sup>3</sup> Հրամանի պարսկերեն բնօրինակը կցվել է հանդեսին, որի լուսանկարը մեզ է տրամադրել Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Արդի հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Սեպուհ Ապանեանը: Երախտագիտություն եմ հայտնում հարգարժան պրոֆեսորին: Լուսանկարը կցված է սույն հոդվածին, տե՛ս պատկեր 1: «Ազդարար»-ում տպագրված հայատառ պարսկերեն տարբերակը տե՛ս պատկեր 2:

րասում երկրորդ հայկական տպարանի հիմնադիր<sup>4</sup> և «Ազգարար» հանդեսի խմբագիր Հարություն քահանա Շմավոնյանը:

Ստորև ներկայացնում ենք փաստաթղթի հայատառ պարսկերեն տարբերակը՝ տպագրված «Ազգարարում»-ում և դրա՝ մեր հայերեն թարգմանությունը.

Նվաբ Օմդոթը մօլք Վարաջայ վէ միրը հրնդ ասֆար օվլայ Անուրագին խան Բահադօղ զոֆր շանգ խօլդա լու Մօլքենու Սուլտանունու:

Զման տա զման ազ սփահր բօլանա: Բը ֆտահ դիգեր բաս բըֆրուգմանդ:

Ազն բիշտեր գովրամ դար զըմիր: Վլաեաթ սթան բաշ վու աֆաղգիր:

Էյ աֆտաբ դահր ազման նուր վամագիր. էյ սաեար խօղայ ազ սարմ սայէ բարմադար:

Գեար դլու դաստա բգրուգան բաշըտ. Դըլու դաստ խօղայեգան բաշըտ:

Դաստըտ ֆէ ամաղ բար ֆարամ բիդրամ մաբաղ: Հոչանդ բզլ բիշ ֆունի հիշ ֆամ մաբաղ<sup>5</sup>:

Ազանջայէ աղ խլաեյ խալըխ բե նիազ Փատրի արաթուն էբն Շամաուն, ազ դարըվելմ Շիրագ բմօղթագաե ին ֆէ բրատ ոէզղ բըհար սոմ ֆէ ֆարդէ աստ ոաղմ զարուէթ աստ նահդան դարուն դիար դադամ, վարէդ ին սարզըմին գեաշտէ վու ին հիեմադան հոչանդ ազ վազլ ու հօնար բըհրա նադարէդ ամա ֆէրի ֆեարդ ֆէ բրահը նգարըլ ֆթաբի մօղաթի բայէդ մըհնար ֆեարդ դըրն սուրաթը շափխանայ բայերդ թարթիփ ֆեարդ շնանչէ բըվազլի էլահի բըմիաման ըլթաֆ խօղավանդի բըսհի մուֆուրէ շափխանայ էթեար ումիտվար աֆգար լայէրգալ ալի ունէտ ֆէ ին շափխանայ բընամը նամի վու էսմը սամի վալաջանի մուրվվան գեարդեաղ վու ֆուրուբ արաբի վու վարսի վու դէրիհայ շափ գադա շուվեաղ գիաղէ հաղդէ աղդաբ:

<sup>4</sup> Հարություն Շմավոնյանի գործունեության և Մադրասում գործող տպարանների մասին կան տարակարծություններ: Այնուամենայնիվ, նշենք, որ Մ. Խ. Դավթյանը և Հ. Գ. Մանուչարյանը Մովսես Բաղրամյան. հայ քաղաքական հրապարակախոսությունը սկզբնավորումը զբոսում (ԵՊՀ հրատ., 2015) հիմնավորում են, որ Շահամիրյանների տպարանի հենքի վրա (առաջին հայտատառ տպարանը Մադրասում հիմնել է Շահամիր Շահամիրյանը՝ 1772 թ.) 18-րդ դարում առաջացավ հայ արհեստավարժ հրատարակիչների մի խումբ, որի մեջ ուրույն տեղ ունի Հարություն Շմավոնյանը: Նա, իրականում, շարունակել է Շահամիրյանի գործը (էջ 33): Հարություն ֆահանա Շմավոնյանը առաջին հայ խմբագիրն էր և այդ, նախադեպը չունեցող, մեծ գործի հիմնադիրն ու ստեղծողը: Տե՛ս նաև՝ Ա., Բաբայան, Հայ գիրքը և տպագրությունը, Երևան, 1963, էջ 68-73, Հ. Խաչատրյան, «Մադրասի տպագրատան պատմությունից», ԼՀԳ 3 (41), 1984, էջ 41-50:

<sup>5</sup> Չափածո հատվածները վերցված են Նիզամի Գյանջավիի «Էսֆանդարնամե [Ալեֆսանդրի գիրքը] պոեմի առաջին «Շարաֆնամե [Փառքի գիրք]» մասից:

Թարգմանություն՝

Նավար Ումդաթ ու-Մուք, Վալլա Ջահ, Ամիր ու-Հինդ, Ասաֆ ու-Գաուլա, Անվար ու-Գին Խան Բահադուր, Ջաֆար Ջանգ

Թո՛ղ Աստված հավիտյան պահի նրա երկիրն ու իշխանությունը:

[Չափածո հատվածը]

«Ոմն (բոց. արարչի արարածներից նվագագույնը) պաղրե Արաթուն Իբն Շամուն [Շմաունի որդի Հարությունը]՝ Շիրազի բարձրագույն կրթարանից, ըստ անհրաժեշտության՝ կնքված և համարակալված օրապահիկի թղթով, պահանջվել էր այս երկիր մտնի, ժամանել է այս երկիր: Եվ այս անգետը, չնայած գիտությունից ու արվեստից ոչինչ չգիտի, սակայն մտածեց, որ գիրք գրելու համար պետք է շատ ժամանակ վատնել, ուրեմն, հարկավոր է տպարան հիմնել՝ նախատեսվող տպարանը մեծ ջանքերով և Աստվածային գերազանցությամբ և Աստվածային շնորհի օժանդակությամբ: Լիահույս ենք, որ մեծարգո պարոնի մշտական բարությունը այդ տպարանը Սամի Վալլաջահի անունով հայտնի դառնա և արաբերեն, պարսկերեն և այլ գրքեր տպագրվեն: Քաղաքավարության սահմաններում բավական է»:

Գրության բովանդակությունից պարզ է, որ, ըստ ամենայնի, Հարություն Շմավոնյանը ժամանելով Շիրազից՝ նախաձեռնել է նաև արաբատառ տպարանի հիմնումը Մադրասում, որին համաձայնել է Արկոտի իշխանը և ուղարկել թույլտվությունը<sup>6</sup>:

Ըստ ուսումնասիրողների, 1780-ական թվականների սկզբին Մադրասի առաջավոր քաղաքացիներն իրենց զավակների կրթության և համայնքի լուսավորական գործի ծավալման նպատակով Իրանի և Հնդկաստանի հոգևոր թեմի առաջնորդից՝ մի արժանավոր քահանա են խնդրել: Մկրտիչ արքեպիսկոպոսը նպատակահարմար է գտնում Մադրաս ուղարկել շիրազցի Հարություն Շմավոնյանին, որն արդեն յոթներորդ տարին էր ինչ ճգնում էր պարսիկ դերվիշների մենաստանում՝ Բաբաքուն կոչվող լեռան այրերից մեկում<sup>8</sup>: Նշենք, որ Շիրազի

<sup>6</sup> Այս փաստաթղթի մասին տե՛ս նաև՝ Mesrovb Jacob Seth, *Armenians in India. From the earliest times to the present day. A work of original research*, Asian Educational Services, New Delhi, Madras, 1992, p. 599.

<sup>7</sup> Դեռևս 7-րդ դարից արևելյան Բրիտանական արևելասկսկական-թեմական կենտրոններից մեկը Իրանի Ֆարս նահանգն էր՝ Ռեյ-Արդաշիր (գտնվել է Ֆարս և Խուզեստան նահանգների հատման կետում) կենտրոնով: Այս թեմի իրավասության տակ էին գտնվում նաև Հնդկաստանի եկեղեցիները: Իսկ 17-րդ դարում Իրան-Հնդկաստանի թեմը՝ առաջնորդանիստ Նոր Ջուղա ֆաղաֆով նմանվում էր մի փոքրիկ հասարակապետության, որի աշխարհիկ կառավարիչները ընտրվում էին համայնքի ազդեցիկ հայ ընտանիքներից, իսկ հոգևոր առաջնորդները ընտրությունից հետո հաստատվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսների կոնդակներով:

<sup>8</sup> Մ. Մխիթարյան, *Հայերեն առաջին պարբերականը և նրա խմբագիրը*, էջ 20-21:



հյուսիսային լեռնաշղթայի Բաբաքուն հեռագագաթի անունը և այս լեռան հոգևոր բովանդակությունը կապված է 10-11-րդ դարերում այստեղ ապրած սուֆի շեյխ Աբու Աբդալլահ իբն Օբադալլայ Բաքույա Շիրազիի անվան հետ, որը հայտնի է նաև իբն Բաքույա ձևով: Իբն Բաքույան ճգնել է այս լեռան այրերից մեկում, 1037 թվականին մահացել և թաղվել է այդտեղ<sup>9</sup>: Ըստ ամենայնի, հենց Բաբա Գունի անունը, որը բառացի նշանակում է «լեռան հայր», ընդ որում, սուֆիզմի մեջ բաբա-ն պատվավոր կոչում էր եղբայրակցություն ղեկավարների, շեյխերի, մուրշիդների և դերվիշների համար, դարձել է իբն Բաքույայի ժողովրդական անվանակոչումը, որով հայտնի է նաև լեռը: Փաստորեն, հայ քահանան ճգնել է սուֆիների ճգնավայր Բաբաքունի այրերից մեկում, երբ 1777 թվականին կորցրել էր իր երկու զավակներին և, զանց առնելով աշխարհիկ կյանքը, նվիրվել էր մենակեցությունը<sup>10</sup>: Ինչպես նշում է Մեսրոպ 3. Ալթեանցը այդ ընթացքում Շմավոնյանը «Այլ սակայն յուսահատ որքան էրն, տակաւին անվհատաբար յօգուտ ի կիրարկ նա զպատեհն եւ յընթացս եօթնամեայ ճգնութեանն ի՛ Բաբաքո՛ւ, ուսաւ ուշիմ եւ մտավարժ Հայ ազգի կրօնաւորն ի Գարվիշացն Պարսից զգիր եւ զգարութիւն Իրանի եւ եղև հմուտ պարսկագէտ ի զարմանս ճգնակից եղբարցն»<sup>11</sup>:

Քննարկվող փաստաթղթում Հարություն Շմավոնյանի համար օգտագործվել է «պաղրե» կաթոլիկ հայրերի դիմելաձևը, որից պետք է ենթադրել, որ նա կարող էր հարել կաթոլիկ եկեղեցուն<sup>12</sup>: Նշենք, որ այդ շրջանի Մադրասի հայ կաթոլիկների ոչ մեծաթիվ հանրությունը կարևոր գործ է կատարել գաղութի ազգային ոգին պահելու և առաջընթացի համար: Նրանց մեջ հատկապես նշանավորվում են Շահրիմանեան և Ղարամեան տոհմերը, որոնք գաղթել էին Ջուղայից և եվրոպական կաթոլիկների հետ ունեցած իրենց մտերմության արդյունքում հաջող դիրքեր էին գրավում թե՛ առևտրի և թե՛ հասարակական ասպարեզներում<sup>13</sup>: Մյուս կողմից, կաթոլիկ քարոզիչների գործունեության նշանակու-

<sup>9</sup> M. Kasheff, “Bābā Kūhī”, *Eir*, Vol. III, Fasc. 3, pp. 293-294 <https://iranicaonline.org/articles/baba-kuhi>; Jan Rypka, *History of Iranian Literature*, ed. by Karl Jahn, Dordrecht-Holland, 1967, p. 234.

<sup>10</sup> Ռուբէն Վրդ. Յովակիմեան, «Յարութիւն Քահանայ Շմաւոնեան», *Սիրոն*, Ապրիլ-Մայիս-Յունիս, 1938, էջ 92, Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեան, *Հնդկահայք, Տպաւորութիւններ եւ տեղեկութիւններ (Պատկերագրորդ)*, Զ., Երուսաղեմ, տպարան Մրբոյ Յակոբեանց, 1941, էջ 53:

<sup>11</sup> «Տէր Յարութիւն Շմաւոնեան. հիմնադիր հայ հրապարակագրութեան», *Հանդէս ամսօրեայ*, թիւ 5-6, 1923, սյ. 237:

<sup>12</sup> Հարցի շուրջ նամակագրության ընթացքում պրոֆ. Ասլանեանը կարծիք հայտնեց, որ հայերեն «Տէր» բառին համարժեք հանախ գործածվել է «պաղրե» ձևը և կապված չի եղել կաթոլիկ եկեղեցուն հատելու համգամանքի հետ: Ընդ որում, այս ավանդույթը Հնդկաստանում ձևավորել էին պորտուգալացիները, որոնք գործածում էին այդ ձևը «հոգևորական, կղերական» իմաստով:

<sup>13</sup> Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեան, *Հնդկահայք*, էջ 56:

թյունը արևելքում տպագրական գործի տարածման մեջ շեշտելով, նշենք, որ առաջին տպագրական մեքենան Իրան է հասել կարմելիտ հայրերի միջոցով՝ 1628 թվականին, որից դեռևս տաս տարի առաջ կարմելիտ հայր Հովհաննես Թադեոսը Սեֆյան շահ Աբբաս I-ին հաղորդել էր արաբատառ տպագրության գործն Իրան տեղափոխելու նպատակների մասին<sup>14</sup>: Կարող ենք ասել, որ իրանահայ մտավորական գործիչների շրջանում ևս արաբատառ տպագրություն հիմնելու գաղափարը շրջանառության մեջ էր այդ ժամանակից և փոխկապակցված էր կաթոլիկների գործունեության հետ:

### Արաբատառ տպագրություն. ընդհանուր ակնարկ

Վաղ արդի շրջանում, երբ իսլամական աշխարհը ոգևորված չէր տպագրության զարգացման և դրա առավելությունների գաղափարով, արաբատառ տպարանների հիմնումը արդիական էր նաև Հնդկաստանում: Ընդ որում, հայկական տպագրությունը արևելքում սկսվել էր շատ ավելի շուտ, մասնավորապես՝ Օսմանյան կայսրությունում՝ 1567 թվականից, Սեֆյան Իրանում՝ 1638 թվականից, իսկ մողոլների կայսրությունում՝ 1772 թվականից: Հայերը տպագրական գործի և գիտելիքի կրողն էին դեռևս 16-րդ դարի սկզբից, երբ 1512 թվականին Վենետիկում տպագրվեց առաջին հայերեն գիրքը: Հայտնի է, որ արաբատառ տպագրությունը եվրոպայում սկսվել է 15-16-րդ դարերից<sup>15</sup>, իսկ Օսմանյան կայսրությունում, սուլթանական արգելքների պատճառով, միայն 1706 թ. տպագրվեց առաջին արաբատառ գիրքը՝ Աստվածաշնչի արաբերեն թարգմանությունը (Հալեպում)<sup>16</sup>: Իրանում առաջին պարսկերեն գիրքը տպագրվեց 1818 թվականին, երբ Միրզա Ջայն ալ-Աբեդդինը Թավրիզում հիմնեց

<sup>14</sup> S. David Aslanian, “The Early Arrival of Print in Safavid Iran: New Light on the First Armenian Printing Press in New Julfa, Isfahan (1636-1650, 1686-1693)”, *Handes Amsorya*, Vienna-Yerevan, 2014, col. 381-383.

<sup>15</sup> Ա. Առափեյան, «Արաբական առաջին տպագիր գրքեր. դրվագներ արաբական տպագրության պատմությունից», *Արևելագիտության հարցեր VIII*, Երևան, 2014, էջ 10-19, տե՛ս E. Lincoln, “Gospel Lessons: Arabic Printing at the Tipografia Medicea Orientale”, *Art in Print*, vol. 4, 2014, pp. 4-10, և այլն: 1538/9 թվականին Վենետիկում տպագրվել է Գուսանը Ալեսանդրո Պազանինոյի կողից, տե՛ս Sebouh David Aslanian, “The Early Arrival of Print in Safavid Iran: New Light on the First Armenian Printing Press in New Julfa, Isfahan (1636-1650, 1686-1693)”, col. 393: 1651 թ. Ամստերդամում տպագրվել է Սաադիի «Գոլեստան» երկը, 1644 թ. տպագրվել էր պարսկերեն ասացվածքների մի ընտրանի: Մինչև 1700 թվականը եվրոպայում տպագրված արաբատառ պարսկերեն գրքերի մասին տե՛ս Paul de Lagarde, *Persische Studien*, 1883, pp. 1-12:

<sup>16</sup> U. Ryad, “Introduction: the Ottoman and Persian Empires in the 18<sup>th</sup> Century”, in *Christian-Muslim Relations, A Bibliographical History*, vol. 12, Asia, Africa and the Americas (1700-1800), ed. by David Thomas and John Chesworth, Brill – Leiden. Boston, 2018, p. 9.

տպագրատուն<sup>17</sup>: Բարձր դուռը և օսմանյան հոգևոր խավը մերժողական կեց-վածք ունեին արաբատառ տպագրությունն և նկատմամբ: Նրանք թույլ չէին տալիս արաբատառ գրքերի տպագրությունը մինչև 1720-ական թվականները<sup>18</sup>, իսկ Ղուրանը չտպագրելու ֆեթվան գործեց մինչև 19-րդ դարի կեսերը: Արաբատառ տպարանների արգելքը կրոնական հենք ուներ և առաջին հերթին կապված էր Ղուրանը տպագրելու ժամանակ հնարավոր անճշտություններ ի հայտ գալու մտավախություն հետ: Արգելելով արաբատառ տպագրությունը, խուսափում էին հնարավոր տպագրական սխալներից, որոնք, կարող էին ի հայտ գալ տպագրության ժամանակ և աղավաղել Ղուրանի բովանդակությունը, խուսափում էին ոչ մոտուլմանների ներգրավվածությունից, որոնք ստեղծել էին տպագրական գործը: Սրան հավելվում էր նաև սոցիալական բաղադրիչը, մասնավորապես ձեռագիր գրքի ոլորտում մոտուլմանների և «ուլամայի» ունեցած առաջատար դիրքը, գրիչ-ընդօրինակողների մեծ թիվը, որոնց համար ձեռագիր գրքի ստեղծումը ապրուստ վաստակելու միջոց էր:

<sup>17</sup> N. Green, “Persian Print and the Stanhope Revolution: Industrialization, Evangelicalism, and the Birth of Printing in Early Qajar Iran,” *Comparative Studies of South Asia, Africa and the Middle East*, 30/3, 2010, p. 480.

<sup>18</sup> Առաջին արաբատառ տպագրատունը Սամբուլում բացվեց 1727 թ. Ահմեդ III-ի հրամանով Մուֆտին արձակեց ֆեթվա, որ տպագրությունը օգտակար է գրքերի բազմացման համար: Տպագրատան բացման գաղափարակիրը և տպագրական գործի հիմնադիրն ու իրականացնողն էր Իբրահիմ Մյուքեֆերիկան՝ դավանափոխ (խալանացած) հունգարացի քրիստոնյա բողոքականը: Նշենֆ, որ 18-րդ դարում օսմանյան պալատից դուրս գտնվող մարդիկ, որոնց օգտակարությունը ապացուցված էր պալատի համար, կարող էին զբաղեցնել «մյուքեֆերիկա»-ի պաշտոնը, որը ենթադրում էր, որ Օսմանյան արևմտիկում սուլթանին մոտ կանգնած մարդ է և իրականացնում է կարևոր հասարակական և բաղաձայնական առաքելություններ: Իբրահիմը, որը նաև տիրապետում էր եվրոպական լեզուներին, ստացավ այդ պաշտոնը, որը հետագայում դարձավ նրա մականունը, տե՛ս Vefa Erginbaş, “Enlightenment in the Ottoman context: Ibrahim Müteferrika and his Intellectual Landscape”, *Historical Aspects of Printing and Publishing in Languages of the Middle East*, ed. by Geoffrey Roper, Brill, Leiden-Boston, 2014, p. 65: Իբրահիմը իր հիմնադրած տպարանում տպագրության իրավունք էր ստացել միայն աշխարհիկ բովանդակությամբ գրքեր հրատարակելու համար՝ բառարաններ, զեղարվեստական, աշխարհագրությանը և պատմությանը վերաբերող գրքեր: Նա նաև տպագրեց իր հեղինակած հենց իր դավանափոխության պատմությունը, տե՛ս O. Sabev, “Waiting for Godot: Formation of Ottoman Print Culture, in Historical Aspects of Printing and Publishing in Languages of the Middle East”, *Islamic Manuscripts and Books*, Vol. 4, Brill, 2014, pp. 101-120; Taisiya Leber, “The Early History of Printing in the Ottoman Empire through the Prism of Mobility”, *Diyâr*, Jahrgang 2-Heft1, 2021, p. 77: Նշենֆ նաև, որ հայկական տպագրության Կ. Պոլիսի օջախը գործել է 16-րդ դարից: Վենետիկից հետո այս ֆաղափն առաջինն էր, որտեղ հայերեն գիրք տպվեց: 1567 թ. Աբգար Դ-ի կամ Աբգար Թոփառեցին այստեղ հիմնում է հայկական տպարան: Թոփառեցուց հետո մոտ հարյուր տարի այս օջախում հայերեն գրքեր չեն տպվել: 17-րդ դարի երկրորդ կեսին Երեմիա Քյոմյուրեյանը, Գրիգոր Մարզվանցին, Ասվաճատուր Դաշտենցը հիմնում են տպարաններ, տե՛ս Ա. Ս., **Բաբայան**, «Հայ տպագրության 450 տարին», ՊՔՀ, 1 (20), Երևան, 1963, էջ 34:

Արաբատառ տպագրությունը, որը սկիզբ էր առել 16-րդ դարում Իտալիայում, առավել համապարփակ բնույթ, նաև կրոնական գրքերի տպագրության ընդգրկմամբ, ստացավ 19-րդ դարում: Դա եվրոպայում գրքի տպագրության մեքենայացման արագ արձագանքն էր<sup>19</sup>, ինչը նշմարվեց նաև Հնդկաստանում:

Տպագրական գործի սկզբնավորողները Հնդկաստանում կաթոլիկ քարոզիչներն էին՝ 1556 թ. Գոայում ճիզվիտ քարոզիչները հիմնել էին առաջին լատինատառ տպարանը<sup>20</sup>: Կալկաթայում արաբատառ տպագրական գործը 1781 թվականին նախաձեռնել էր անգլիացի արևելագետ Ջարլզ Ուիլկինսը՝ ստեղծելով բենգալերեն և պարսկերեն տպագրական տառերը և տպագրել էր առաջին պարսկերեն գիրքը՝ “Enshā-ye Harkaran”՝ Ֆրանսիս Բալֆուրի հեղինակությամբ: 1781 թվականից մինչև 1788 թվականը Կալկաթայում տպագրվել էին բավականին թվով պարսկերեն գեղարվեստական գրքեր: 1799 թվականին բապտիստ քարոզիչների ջանքերով ևս մեկ տպարան էր հիմնվել Սերամփուրում/Կալկաթա, որտեղ նույնպես տպագրվել են պարսկերեն գրքեր և, որը մինչև 19-րդ դարի կեսերը արաբատառ տպագիր գրքի առաջատարն էր Հնդկաստանում<sup>21</sup>:

Ընդհանրապես, Հնդկաստանում արաբատառ տպագրության գործը և պարսկերեն, արաբերեն թարգմանչական գործի սկզբնավորումն ու զարգացումը տեղի է ունեցել Ասիական ընկերության (1784 թ., Asiatic Society) ջանքերով, որը Բենգալում հիմնադրվել էր անգլիացի արևելագետներ Ջարլզ Ուիլկինսի և Ուիլիամ Ջոնսի ջանքերով<sup>22</sup>: Տպարաններ են գործել Բոմբեյ, Կալկաթա, Ագրա, Ալլահաբադ, Հեյդարաբադ, Բանարես, Բարլի, Դելի, Լաքհնաու քաղաքներում<sup>23</sup>: Հնդիկ գիտնական Վ. Դհարվադկերի հաշվարկով, բրիտանական և դանիական միսիսոներների գործունեության արդյունքում 1800-1840 թթ. տպագրվել էր 212000 անուն գիրք և բուկլետ՝ քառասուն լեզվով՝ ներառյալ արաբատառ լեզուները<sup>24</sup>: Թերևս, կարող ենք նկատել, որ արաբատառ տպագրությունը

<sup>19</sup> N. Green, “Persian Print and the Stanhope Revolution: Industrialization, Evangelicalism, and the Birth of Printing in Early Qajar Iran,” p. 474.

<sup>20</sup> [https://shodhganga.inflibnet.ac.in/bitstream/10603/63040/9/09\\_chapter%202.pdf](https://shodhganga.inflibnet.ac.in/bitstream/10603/63040/9/09_chapter%202.pdf)

<sup>21</sup> M. Ġarawī, “Ketābhā-ye fārsī-e ĉāp-e hend wa tārik̄ča-ye ān,” Honar o mardom 102-03, 1350 Š./1971, pp. 27-28.

<sup>22</sup> Տե՛ս *The Annual Biography and Obituary*: vol. XXI, London 1837, pp. 70-71.

<sup>23</sup> Տպագրատների ցանկը տե՛ս M. Ġarawī, “Ketābhā-ye fārsī-e ĉāp-e hend wa tārik̄ča-ye ān,” pp. 36-37.

<sup>24</sup> M. Rzepka, “Persian Bible Translations in India in the Early 19<sup>th</sup> Century”, *Orientalis Christiana Cracoviensia* 3, 2011, p. 109. 1888 թ. Հեյդարաբադում հիմնվում է Դա՛իրաթ ալ-Մա՛րիֆ ալ-Ութմանիյահ տպագրատունը, որը արաբերեն ձեռագրերի տպագրության առաջատարն էր, տե՛ս O. Khalidi, “Dā’irat al-Ma’ārif al-Uthmāniyah: A Pioneer in Manuscript Publishing in Hyderabad”, *Deccan, India, MELA Notes*, No. 80, 2007, pp. 27-32:

Հնդկաստանում ևս ծաղկում ապրեց 19-րդ դարի սկզբից, երբ տեղի ունեցավ «լորդ Ստանհոփի» տպագրական հեղափոխությունը և որի ստեղծած (1800 թվական) տպագրական մեքենայի փոքր շափը թույլ էր տալիս դրանք հեշտությամբ տեղափոխել նավահանգստային քաղաքներ և հիմնել տպագրատներ<sup>25</sup>:

Ամփոփելով Հնդկաստանում արաբատառ տպագրության սկզբնավորման մասին կարճ անդրադարձը և վերադառնալով «Ազդարար»-ում տպագրված փաստաթուղթ-հրամանին, նշենք, որ Մադրասում արաբատառ տպագրության հիմնման գործի նախաձեռնությունը, ըստ ամենայնի, պատկանել է հայերին: Իսկ այդ գործի ընդհանուր պատկերը Հնդկաստանում նաև ցույց է տալիս, որ ինչպես Իրանում և Օսմանյան կայսրությունում, այնպես էլ այստեղ, տպագրական մշակույթը սկիզբ է առել ներգաղթյալների, միսիոներների, եվրոպացիների նախաձեռնությամբ և ջանքերով: Այդ համատեքստում է, որ նշված տարածաշրջանում արաբատառ տպագրական գործի տեղաշարժի մեջ ևս հայերն ունեցել են իրենց ներդրումը<sup>26</sup>: Ընդ որում, տվյալ դեպքում հայ գործիչները այդ գիտելիքը տեղափոխում էին արևմուտքից Իրան, Իրանից էլ՝ Հնդկաստան: Հայ մտավորականների այս գործունեությունը միջտարածաշրջանային բնույթ ուներ: «Ազդարար»-ի սույն գրությունը թույլ է տալիս արձանագրելու, որ հայ գործիչները, որոնք 18-րդ դարի կեսերին Հնդկաստանում հիմնել էին հայատառ տպարաններ, քաջ գիտակցել են արաբատառ տպարանների անհրաժեշտությունը, իսկ Մադրասի նավահանգիստային դիրքը և տպագրական մեքենայի տեղափոխման հնարավոր հեշտությունը նպաստավոր էր այդ գործի ձեռնարկման համար:

Հնդկաստանի 9-րդ նավաբ Վալլաջահի պարսկերեն հրամանի հայատառ տարբերակը փաստում է, որ Մադրասում արաբատառ տպագրության ջատագովն էր Հարություն քահանա Շմավոնյանը: Մուհամմադ Ալի խան Վալլաջահը աչքի է ընկել կրթական գործի, մշակույթի և կրոնի նկատմամբ իր առանձնահատուկ քաղաքականությամբ և կաթոլիկ քարոզիչները ևս ջանացել են նրան ներգրավել արաբատառ գրքի տպագրման գործի մեջ: Այն որ, 18-րդ դարում արաբատառ տպարան դեռ չէր հիմնվել Մադրասում, հուշում է ոչ միայն փաստաթղթի բովանդակությունը, այլ նաև այն, որ դրա պարսկերեն բնօրինակը կցվել է «Ազդարար» հանդեսին, իսկ տպագրվել է միայն հայատառ տարբերակը: Մադրասում արաբատառ տպագրության գործի պատմության մեջ սույն փաստաթղթի նշանակությունը արձանագրելով, նշենք, որ, դեռևս որևէ փաստագրական նյութ Մադրասում «Սամի Վալլաջահ» անվամբ առանձին արաբատառ տպա-

<sup>25</sup> N. Green, “Persian Print and the Stanhope Revolution: Industrialization, Evangelicalism, and the Birth of Printing in Early Qajar Iran,” pp. 475-479.

<sup>26</sup> 1843 թվականին հայ առևտրականի միջոցով Իսֆահան է հասել «արեհնով շարվածով» ձեռքի տպագրական հաստոցը, նույն տեղում, էջ 485:

գրատան հետագա գործունեության մասին մեր ձեռքի տակ չի հայտնվել: Սակայն պետք է նաև արձանագրենք, որ Հարություն Շմավոնյանի տպագրատանը պարսկերեն տառերի ստեղծման մեջ վարպետացել էր «զհոգեծին զաւակն իմ՝ զձեռնասուն աշակերտն, զԽաչիկ Ծատուր Զաիփեանն Նոր-Ջուղայու Թաւրիզեցին... զի ի սկզբանէ աշխատող է և օգնական իմ և համայն գործարանիս, և մանավանդ փորագրութան տառից, և ոչ միայն Հայոց, այլ և այլազգաց և պարսից՝ զոր վասն փորձառութան յայտ արարաք ձերում՝ բանասիրութեան պարսից լեզվով, ըստ Բէիթ ասեն, սակա գովութեան տարժանելի գործոյս աշխատողաց, ի փառս տուողին շնորհաց» (1793 թվական, Պորփիրի Ներածութիւնն, Դաւիթ Անյաղթի թարգմանութեամբ, հիշատակարան)<sup>27</sup>:

«Ազգարար»-ում հայատառ պարսկերեն փաստաթղթի տպագրության հետ կապված կրկին հարց է առաջանում. արդյո՞ք միայն արաբատառ տպագրության բացակայությամբ էր պայմանավորված պարսկերեն նյութը հայկական այբուբենով տպագրելու հանգամանքը, թե՞ հայ ընթերցողին հասանելի և ընթեռնելի էր միայն հայերեն գիրը: Հայտնի է, որ հնդկահայ գաղութի ձևավորման կորիզը Նոր Ջուղայի հայ բնակչությունն էր<sup>28</sup> սկզբում ջուղայեցի առևտրականները, այնուհետև՝ նրանց ընտանիքները, որոնք տիրապետում էին պարսկերենին: Պարսկերենը Հնդկաստանում արքունիքի լեզու է եղել մոտ 300 տարի՝ 15-րդ դարի վերջից մինչև 18-րդ դարի վերջ և 19-րդ դարասկիզբ: Ընդ որում, պարսկերենը իր գերակա դիրքն ունեցել է այդ երկրի հասարակության բոլոր շերտերի, մուսուլման և ոչ մուսուլման հատվածների շրջանում՝ որպես գրականության և վարչական գրագրության լեզու: Մողոլ արքա Աքբարի իշխանության (1556-1605 թթ.) տարիներին պարսից գրականության աննախագեպ առաջընթացով, և նաև՝ միջին դարոցներում կրոնական առարկաների պակասեցման պայմաններում՝ պարսկերենը դարձել էր հնդիկ արքայի և պալատի առաջին լեզուն<sup>29</sup>: Իսկ պարսկականացված մշակութային կոթողները և պարսկերեն գրական ստեղծագործությունները ի հայտ էին եկել դեռևս 13-րդ դարից<sup>30</sup>:

<sup>27</sup> Գ. Զարբանալյան, Պատմութիւն հայկական տպագրութեան, Սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, Վենետիկ, Միխարեան տպարան, 1895, էջ 202-203:

<sup>28</sup> Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեան, Հնդկահայք, Տպաւորութիւններ եւ տեղեկութիւններ (Պատկերազարդ), Զ., Երուսաղէմ, տպարան Մրոյ Յակոբեանց, 1941, էջ 44, Ռ. Ա. Աբրահամյան, «Հայերը Մադրասում», Բե՛շ, 3 (87), Երևան, 1995 թ., էջ 182-187:

<sup>29</sup> T. Qutbuddin, "Arabic in India: A Survey and Classification of its Uses, Compared with Persian", *Journal of the American Oriental Society*, Vol. 127, No. 3, 2007, pp. 316-317.

<sup>30</sup> Այս համատեքստում հիշատակման արժանի է հայտնի հնդիկ հեղինակ Ամիր Խոսրովը (1253-1325 թթ.), որը պարսկերենով հսկայածավալ գրական ժառանգություն է թողել: Հարցի մասին տե՛ս նաև՝ Michael H. Fisher, "Teaching Persian as an Imperial Language in India and in England during the late 18<sup>th</sup> – 19<sup>th</sup> Centuries," *Literacy in the Persianate world, Writing and the Social Order*, ed. by B. Spooner, W.L. Hanaway, University of Pennsylvania Museum of Archaeology and Anthropology Philadelphia, 2012, pp. 328-331:

Հնդկահայ բնակչությունը տիրապետում էր արաբատառ գրին՝ պայմանավորված դպրոցներում այն ուսուցանելու հանգամանքով, մասնավորապես՝ պարսկերեն գրականության միջոցով: Կարծում ենք, հայերեն գրի օգտագործումն ուներ խորհրդանշական և բարոյահոգեբանական նշանակություն և քանի դեռ չկար արաբատառ տպագրությունը, հայ ընթերցողին մատչելի էր և ավանդույթի ուժով հաճելի էր հայատառ գիրը՝ չնայած խոսում և գրում էր նաև պարսկերեն: Պետք է նշեմ, որ հնդկահայերի շրջանում հայերեն-պարսկերեն երկլեզվության անկման մասին Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի վերջին առաջնորդ Վահան Եպսկ. Կոստանեանը, որը 1949 թվականին Բաղդադով անցել է Հնդկաստան, իր հոտին այցելության համար, ցավով նշում է, որ Բոմբեյի և Կալկաթայի հայության  $\frac{3}{4}$ -ը հայերեն չէր խոսում, իսկ միայն Կալկաթայում գործող օրիորդաց և տղայոց փոքր դպրոցներում նույնիսկ աղոթքը անգլերեն էր<sup>31</sup>:

Ամփոփելով, նշենք՝

1. Արևելքում արաբատառ տպագրության գործի շրջանառության, մասնավորապես, Մադրաս տեղափոխելու նախաձեռնության մեջ դերակատարություն են ունեցել նաև հայ հրատարակիչ-մտավորականները:

2. Մադրասում արաբատառ տպագրության գործի հիմնման անհրաժեշտությունը պայմանավորված էր պարսկերենի և պարսից գրականության գերակա դիրքով, որն առարկայական են գնահատել նաև հայ մտավորական գործիչները: Մադրասահայ բնակչությունը հավասարապես տիրապետել է հայերենին և պարսկերենին, որը 20-րդ դարում փոխարինվել է անգլերենով:

3. Փաստաթուղթ-հրամանի գոյությունը թույլ է տալիս հետագա ուսումնասիրության առարկա դարձնելու նաև Մադրասում «Սամի Վալլաջահի» անվան արաբատառ տպագրատան հնարավոր գործունեությունը:

<sup>31</sup> 3. Իրազել (Յակոբ Տէր Յակոբեան), Պատմութիւն հնդկահայ տպագրութեան, խմբ. Վազգէն Դուկասեանի, հրատ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկոյ, Անթիլիաս, 1986, էջ 15:







HASMIK KIRAKOSYAN

ON AN ARMENO-PERSIAN DOCUMENT PUBLISHED  
IN “AZDARAR”

**Key words:** Armenian-script, Arabic-script, Persian, printing, journal, document, religious, fiction, Catholic.

In the issue of “Azdarar” of the month *Shbat*, 1795, a decree of Muhammad Ali Khan Wallajah (the Nawab of Arcot in India) was published. The document was in Persian written in the Armenian script. The decipherment and translation of the document proved that Armenian intellectuals were among initiators of the establishment of Arabic-script printing houses in Madras and had a crucial role in the geographic spread of Arabic-script printing culture. Furthermore, the document mentions the founder of the first Armenian journal “Azdarar,” Father Harutyun Shmavonyan, known for his printing activities. In a colophon of one of his printed books, Father Harutyun stated that his pupil Khachik Tsatur Zaipean was skilled in printing Persian letters, which was an essential factor for the successful establishment of an Arabic-script printing house. Also, a Persian version of the document written in the Arabic script was attached to this issue of “Azdarar,” proving the lack of Arabic-script printing facilities and the necessity to print the Persian material in Armenian letters. Presumably, the Armenian community of India was familiar with the written version of Persian and knew the Arabic script as well, but the use of the Armenian script also had a symbolic, moral, and psychological significance for Armenians.

АСМИК КИРАКОСЯН

ОБ ОДНОМ ПЕРСИДСКОМ АРМЕНОГРАФИЧЕСКОМ ДОКУМЕНТЕ,  
НАПЕЧАТАННОМ В ЖУРНАЛЕ “АЗДАРАР”

**Ключевые слова:** Армянские буквы, арабские буквы, персидский, журнал, документ, типография, религиозный, художественный, католический.

В номере за месяц *Шбат* 1795 года в журнале “Аздарар” был опубликован документ на персидском языке, написанный армянскими буквами – указ наваба индийского княжества Аркот Мухаммада Али Хан Валладжаха. Транскрипция и перевод текста показывают, что армянские интеллектуалы были

инициаторами создания типографии в Мадрасе для печатания арабописьменных книг и газет. Зачинателем этого дела был основатель первого армянского журнала “Аздарар” Транскрипция Арутюн Шмавонян. Кроме того, в колофоне одной из книг, напечатанных им, он сообщает, что один из его учеников (Хачик Цатур Заипян) владел искусством создания типографских персидских букв, и это было залогом успеха в деле основания им арабописьменной типографии. Персидский вариант вышеупомянутого документа, написанный арабским письмом, был приложен к номеру журнала, и это также свидетельствовало об отсутствии такой типографии. При этом представители армянской общины Индии владели устным и письменным вариантами персидского, однако для них применение армянского алфавита для написания персидского текста имело также моральное и символическое значение.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

<b>Արտակ Մաղալյան</b> Ղարաբաղի խանության և Օսմանյան կայսրության առնչությունների պատմությունից .....	5
<b>Գեորգի Միրզաբեկյան</b> Դարաշամբի 1590 թ. օսմանյան հարկացուցակը.....	27
<b>Արամ Թովչյան</b> Հունա-հոմոտեական հատուկ անունները Մխիթարյանների հայերեն թարգմանություններում և դրանց տառադարձման նոր սկզբունքները .....	38
<b>Գոռ Երանյան</b> Ամիրջը Տիգրանակերտ կոչելու հայկական ավանդույթը.....	52
<b>Զուլիետա Էյնաթյան</b> Տիեզերքի մասին գիտելիքները Հայաստանում Ե-ԺԳ դարերում .....	67
<b>Գայանե Թերզյան</b> Գրիգոր Մարաշեցու մատենագրական վաստակը (Ընդհանուր ակնարկ).....	78
<b>Գևորգ Ստեփանյան</b> Ճակերթի վանքը պատմության ֆառոտիներում .....	92

## ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

<b>Նարինե Վարդանյան</b> Հայոց կանոնական ժողովածուն մատենագրական աղբյուրներում և հիշատակարաններում.....	145
<b>Մանե Ղևոնդյան</b> Մխիթար Սեբաստացու «Քրիստոնեականներ»-ը որպես կրթադաստիարակչական դասագրքի նմուշ.....	158

## ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>Աստղիկ Մուշեղյան</b> Հոգևոր տաղերգության նմուշների Կոմիտասյան գրառումները.....	171
--	-----

**ՊՐՈՑ. ՀԱԿՈՒՔ ՓԱՓՈՋՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ-ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՅԱՆՑ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

<b>Վահան Տեր-Ղևոնդյան</b>	
Բացման խոսք .....	195
<b>Հասմիկ Կիրակոսյան</b>	
«Ազդարար»-ում տպագրված հայատառ պարսկերեն մի գրության մասին.....	198
<b>Քրիստինե Կոստիկյան</b>	
Ազոլիսի ժ. դարի հայ վանատական հոջա Հովհաննեսի փաստաթղթերը Մատենադարանի կաթողիկոսական դիվանում .....	211
<b>Արսեն Հարությունյան</b>	
Սովի վկայությունները ժ. դարակզբի հայ մատենագրության մեջ .....	224
<b>Անահիտ Թովմասյան</b>	
Թուրան որպես օսմանյան սուլթանների ինֆնիշխանության խորհրդանիշ.....	234
<b>Աննա Օնանյան</b>	
Մշո Սուրբ Կարապետ վանքին նվիրաբերված սկիհի ծածկոցների պատկերագրությունը .....	247
<b>Ժիլբերտ Մեջմանբարյան</b>	
Սեֆյան դարաշրջանի սկզբնաղբյուրները որպես հայ ժողովրդի ժ. – ժ. դարերի պատմության աղբյուր .....	267
<b>Ալբերտ տեն Կատե</b>	
Բառեր, գույակություններ կամ պատգամներ՝ տասը պատվիրանները հայկական ավանդության մեջ (անգլերեն) .....	281
<b>Շախբան Խապիզով</b>	
Հայկական աղբյուրները Դադստանի միջնադարյան պատմության մասին (ռուսերեն) .....	289
<b>Անի Ավետիսյան</b>	
Մատենադարանի արաբատառ ձեռագրերի հավաքածուի հմր. 1751 երայատառ արաբերեն բժշկարանների ժողովածու (անգլերեն) .....	310

<b>Կոնստանտինոս Տակիրտակոզլու</b>	
Աշոտ Բ Երկաթը և բյուզանդացիները. դաշնակիցներ մինչև վե՛րջ, թե՛ ի վերջո թշնամիներ (անգլերեն) .....	317
<b>Էնդի Հիլկենս</b>	
Հակոբ Սրենցու հատերի հայերեն թարգմանությունները .....	329
<b>ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ</b>	
<b>Գեորգ Տէր-Վարդանեան, Աննա Մարիա Մատար</b>	
Հայերէն հնատիպ մի նորայայտ տպագրութիւն.....	349
<b>Հակոբ Քյոսեյան</b>	
Նորահայտ էջեր Դավիթ Քոբայրեցու մատենագրական ժառանգությունից .....	363
<b>Միհրան Մինասեան</b>	
Անտիպ ժամանակագրութիւն 1821 թուականի յունական ապստամբութեան շրջանէն.....	402
<b>ՀԱՂՈՐԴՈՒՄ</b>	
<b>Հայկ Համբարձումյան</b>	
Իրանի մշակույթի օրեր Մատենադարանում.....	427
<b>ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ</b>	
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ .....	429

---

**CONTENTS**
**HISTORY AND PHILOLOGY**

<b>Artak Maghalyan</b> From the History of Relations between the Karabakh Khanate and the Ottoman Empire.....	5
<b>Georgi Mirzabekyan</b> The Ottoman Tax Register of Darashamb (Year 1590) .....	27
<b>Aram Topchyan</b> The Greco-Roman Proper Names in the Mechitarists' Armenian Translations and the New Rules of their Transliteration.....	38
<b>Gor Yeranyan</b> The Armenian Tradition of Calling Amid Tigranakert.....	52
<b>Julietta Einatyan</b> Cosmography in Armenia in the 5th-13th Centuries.....	67
<b>Gayane Tezyan</b> Grigor Marashets'i's Literary Legacy.....	78
<b>Gevorg Stepanyan</b> Chalet' Monastery at the Crossroads of History.....	92

**CHURCH HISTORY**

<b>Narine Vardanyan</b> The Armenian Canonical Collection in Literary Sources and Colophons.....	145
<b>Mane Ghevondyan</b> The Catecheses by Mkhit'ar Sebastats'i as a Model Textbook of Christian Education and Upbringing.....	158

**MUSICOLOGY**

<b>Astghik Musheghyan</b> Armenian Sacred Taghs Recorded by Komitas.....	171
---	-----

---

**INTERNATIONAL CONFERENCE ON ARMENOLOGICAL AND  
ORIENTAL STUDIES DEDICATED TO THE 100TH ANNIVERSARY  
OF PROF. HAKOB PAPAŽIAN**

<b>Vahan Ter-Ghevondyan</b> Opening Speech.....	195
<b>Hasmik Kirakosyan</b> On an Armeno-Persian Document Published in “Azdarar”.....	198
<b>Kristine Kostikyan</b> The Documents of Khoja Hovhannes, an 18 <sup>th</sup> Century Armenian Merchant of Agulis, in the Archive of the Catholicosate of Matenadaran.....	211
<b>Arsen Harutyunyan</b> The Evidences of Famine in the Armenian Literary Sources of the Early 17 <sup>th</sup> Century.....	224
<b>Anahit Tovmasyan</b> <i>Fughra</i> as a Symbol of the Sovereignty of the Ottoman Sultans.....	234
<b>Anna Onanyan</b> The Iconography of Chalice Covers Donated to the Monastery of St. Karapet in Mush.....	247
<b>Jilbert Meshkanbarians</b> Safavid Iranian Sources on Armenia of the 17 <sup>th</sup> – 18 <sup>th</sup> Centuries.....	267
<b>Albert ten Kate</b> Words, Oracles or Commandments – the Decalogue in the Armenian Tradition.....	281
<b>Shakhban Khapizov</b> Armenian Sources on the Medieval History of Dagestan (in Russian).....	289
<b>Ani Avetisyan</b> MS M1751 Judaeo-Arabic Medical Miscellany of the Matenadaran Collection.....	310
<b>Konstantinos Takirtakoglou</b> Ashot II Yerkat and the Byzantines: Allies to the End or Ultimately Enemies?.....	317
<b>Andy Hilkens</b> The Armenian Reception of the Homilies of Jacob of Serugh.....	329

**PUBLICATIONS**

**Gevorg Ter-Vardanyan, Anna Maria Mattaar**  
A Newly Discovered Old Armenian Printing .....349

**Hakob Keosean**  
Pages nouvellement découvertes de l'héritage  
littéraire de David Kobayrétsi .....363

**Mihran Minassian**  
Unpublished Chronicle of the Greek Uprising of 1821 .....402

**REPORT**

**Hayk Hambardzumyan**  
The Days of Iranian Culture at Matenadaran .....427



## СОДЕРЖАНИЕ

### ИСТОРИЯ И ФИЛОЛОГИЯ

<b>Артак Магальян</b> Из истории отношений Карабахского ханства с Османской империей.....	5
<b>Георгий Мирзабекян</b> Османский налоговый реестр Дарашамба 1590 г.....	27
<b>Арам Топчян</b> Греко-римские собственные имена в армянских переводах Мхитаристов и новые принципы их транслитерации.....	38
<b>Гор Еранян</b> Об армянской традиции называть Амид Тигранакертом.....	52
<b>Джюльетта Эйнатян</b> Знания о вселенной в Армении с V по XIII века.....	67
<b>Гаяне Терзян</b> Литературное наследие Григора Марашеци.....	78
<b>Геворг Степанян</b> Чалетский монастырь на перекрестках истории.....	92

### ИСТОРИЯ ЦЕРКВИ

<b>Нарине Варданян</b> Армянский канонический сборник в литературных источниках и памятных записях.....	145
<b>Мане Гевондян</b> Катехизисы Мхитара Себастици, как модель христианского образования и воспитания.....	158

### МУЗЫКОВЕДЕНИЕ

<b>Астхик Мушегян</b> Армянские духовные таги, записанные Комитасом.....	171
---	-----

**МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ АРМЕНИСТОВ И ВОСТОКОВЕДОВ,  
ПОСВЯЩЕННАЯ 100-ЛЕТНЕМУ ЮБИЛЕЮ АКОПА ПАПАЗЯНА**

<b>Ваан Тер-Гевондян</b> Вступительна речъ.....	195
<b>Асмик Киракосян</b> Об одном персидском арменографическом документе, напечатанном в журнале “Аздарар”.....	198
<b>Кристине Костикян</b> Документы агулисского купца 18-го века ходжи Ованеса в архиве католикосата в Матенадаране.....	211
<b>Арсен Арутюнян</b> Свидетельства о голоде в армянской источниках начала XVII века.....	224
<b>Анаит Товмасян</b> Тугра как символ суверенитета османских султанов.....	234
<b>Анна Онанян</b> Иконография покровов потиров, дарованных монастырю Сурб Карапет в Муше.....	247
<b>Жильберт Мешканбарян</b> Иранские Сефевидские источники об Армении XVII-XVIII веков.....	267
<b>Альберт тен Кате</b> Слова, пророчества или заповеди – Декалог в армянской традиции.....	281
<b>Шахбан Хапизов</b> Армянские источники по средневековой истории Дагестана.....	289
<b>Ани Аветисян</b> Рукопись М 1751 арабской коллекции Матенадарана.....	310
<b>Константинос Такиртакоглу</b> Ашот II Еркат и Византия: союзники до конца или в конечном счете враги? .....	317
<b>Энди Хилькенс</b> Армянские переводы речей Иакова Серугского	

---

**ПУБЛИКАЦИИ**

- Геворг Тер-Варданян, Анна Мария Маттаар**  
Новонайденное старопечатное армянское издание.....349
- Акоп Кесеян**  
Новонайденные страницы литературного  
наследия Давида Кобайреци.....363
- Мирян Минасян**  
Неопубликованная хроника периода греческого восстания 1821 года.....402

**СООБЩЕНИЕ**

- Айк Амбарцумян**  
Дни иранской культуры в Матенадаране .....427

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**  
Հատոր 32

**BULLETIN OF MATENADARAN**  
Volume 32

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
Том 32

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝ Մատենադարանում պահվող Իրանի դաջարական շրջանի  
խեժապատ կազմի դրվագ՝ Զիրավի ճակատամարտի  
տեսարանով (ՄՄ, ձեռ. հ<sup>մր</sup>. 6203, 19-րդ. դ.)  
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

27,5 մամուլ  
Ձափ՝ 70×100 1/16: Տպագրման թիվ՝ 200

Մատենադարան  
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի  
հրատարակչական բաժին  
Բ. Երևան, Մաշտոցի պող. 53  
Հեռ. (010) 513033  
publishing.matenadaran@gmail.com